

## Հ. ԽԱԼՓԱԽԶՅԱՆ

### ԴՊՐՈՑՆԵՐՆ ՈՒ ԳՐԱՏՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Սանահնի գրատան 900-ամյակի առթիվ)

Հայաստանի դպրոցները և գրատները պատկանում են այն հուշարձանների թվին, որոնք գրեթե չեն ուսումնասիրված: Նրանք մինչև մեր օրերը պահպանված միջնադարյան Հայաստանի քաղաքացիական շենքերից են և իրենց կառուցողական և ճարտարապետական առանձնահատկություններով պահպանի են՝ բազմակողմանի ուսումնասիրության:

Դեռևս ոչ բոլոր դպրոցներն ու գրատներն են հայտնաբերված, ըստ որում նրանց մի մասն է միայն որոշ շափով նկարագրված և ունեն համառոտ ծանոթագրություններ:

Դպրոցների և գրատների մասին որոշ տեղեկություններ գտնում ենք հայ պատմիչների երկրում: Այսպես, Կիրակոս Գանձակեցին (1200—1271 թ. թ.), խոսելով Վանական վարդապետի՝ Հովհաննես Տավուշեցու կողմից հորանաշատ վանքի կառուցման մասին, նշում է, որ գլխավոր եկեղեցու գավիթը նախատեսված էր աշակերտների հետ պարապելու համար, որոնք Վանականի մոտ էին գալիս Հայաստանի բոլոր շրջաններից<sup>1</sup>: Կ. Գանձակեցու և Ս. Օրբելյանի մոտ (1258—1304 թ. թ.) հիշատակություններ կան գրատներ կառուցելու մասին: Առաջինը խոսում է նոր Գետիկի<sup>2</sup>, երկրորդը՝ Տաթևի<sup>3</sup> գրատան մասին:

Հին հուշարձանների պատերի վրա փորագրված բազմաթիվ արձանագրությունները դպրոցների մասին ոչինչ չեն ասում: Սակայ և ժլատ են տեղեկությունները գրատների մասին: Սանահնի, Հաղբատի, Սաղմոսավանքի

<sup>1</sup> Կիրակոսի Գանձակեցոյ «Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1909, էջ 303:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 209:

<sup>3</sup> «Պատմութիւն Նահանգին Սիսական», արարեալ Ստեփանոսի Օքբելյան եպիսկոպոսի Սինեաց, Թիֆլիս, 1913, էջ 225,

և Հոռոմոսավանքի արձանագրությունները տեղեկություններ են հաղորդում այդ վանքերում գրատներ կառուցելու մասին, իսկ Հաղբատի, Սանահնի, Հոռոմութիւնի, Հոռոմոսավանքի և Թաղիվանքի արձանագրությունները խոսում են նաև այդ գրատների օգտին կատարված նվիրատվությունների մասին<sup>4</sup>:

Գրականության մեջ համառոտ տեղեկություններ դպրոցների և գրատների մասին սկսեցին երեսն գալ Ժմբ դարի կեսերից: Հին հայկական ճարտարապետական հուշարձաններին նվիրված առաջին աշխատությունների մեջ (Ս. Եպիսկոպոս Զալալյանց և ուրիշներ) միայն թվում են այդ շենքերը, մինչդեռ հետագա ուսումնասիրությունները՝ Ռ. Երզնկյանց, Ա. Երիցյան, Ի. Հարությունյան, Ե. Լալյան և ուրիշներ, արդեն սալիք են նրանց համառոտ նկարագրությունները, առանց սակայն ճարտարապետական-գեղարվեստական առանձնահատկությունների վերլուծության<sup>5</sup>:

<sup>4</sup> Կ. Կոտանելյանց, «Վիմական տարեգիր», Ս. Պետերբուրգ, 1913, էջ 24, 33, 45, 56, 72, 79, 83, 118, 234, 235:

<sup>5</sup> Սարգիս Եպիսկոպոս Զալալյանց, «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան», Տփխիս, Հատ. Ա, 1842, էջ 8—16, 53—58: Ռ. Բ. Երզնկեանց, «Նկարագրութիւն Սանահնի», «Մեղու Հայաստանի», Թիֆլիս, 1860, էջ 1, 2, 3:— Ա. Երիցյան, «Տաթևի վանք», «Վ արխելուկիւսկի սլեզգ կ Տիֆլիսե», Պրատոկոլի, Մոսկվա, 1882, էջ 408, 441 (ռուսերեն):— Ա. Ա. Ովարով, «Էմիհածինսկայա բիբլիոտեկա», «Վ արխելուգիւսկի սլեզգ կ Տիֆլիսե», Պրատոկոլի, Մոսկվա, 1882, էջ 351 (ռուսերեն):— Ռ. Երզնկեանց, «Ճանապարհական տեղագրություն Հաղբատա», «Արարատ», «Վաղարշապատ», 1887, էջ 68—70, 170:— Ի. Հարությունյան, «Սանահն», Թիֆլիս, 1898, էջ 31—33:— Ե. Լալյան, «Բոռշալութիւն գավառ», «Ազգագրական Հանդես», Թիֆլիս, է և Հ, 1901, էջ 386, 388, 389, 407 և այլք:

Մեր օրերում գիտնականները գրեթե չեն զբաղվել այդ կառուցումների ճարտարապետության հատուկ ուսումնասիրությամբ: Թ. Թորամանյան, Ն. Բունիաթյան, Յու. Յարալով, Վ. Հարությունյան, Ս. Սաֆարյան, Հ. Եղիազարյան և ուրիշները սահմանափակվել են միայն հիշատակությամբ և կամ պարզ նկարագրությամբ, իսկ մյուսները՝ Ն. Տոկարսկի, Ա. Յակոբսոն, Կ. Ղաֆադարյան և ուրիշները գպրցներն ու գրատները գիտել են որպես յուրահատուկ կառուցվածք ունեցող ծածկի օրինակներ: Բացառություն են կազմում Կ. Ղաֆադարյանի և մեր աշխատանքները, որոնց մեջ քննության է առնված Հաղըատի գրատան կոմպոզիցիան:

Այլ պատկեր է ներկայացնում նրանց գծագրական պատկերում: Սանահնի զպրոցի և գրատան, ինչպես նաև Հաղըատի և Գոշավանքի գրատների էսքիզային գծագրերը հրատարակված են մի քանի անգամ, սակայն, հիշյալ շենքերի, ինչպես նաև Հոռոմոսավանքի և Սաղմոսավանքի գրատների մանրամասն շափագրությունները դեռևս ծանոթ չեն ընթերցողին: Քննության ենթակա կառուցները հայտնի են գլխավորապես պարբերականների և մասնագիտական գրականության մեջ զետեղված լուսանկարների միջոցով:

- <sup>6</sup> Ն. Մ. Տեղարսիկ, «Արխիտեկտուրա դրվելոյե Արմենիա», Երևան, 1946, էջ 169—173, 250, 257, 285, 313 (ռուսերեն):— Նույնի՝ «Արխիտեկտուրա Արմենիա», IV—XIV դ. դ., Երևան, 1961, էջ 281, 290, 301, 308 (ռուսերեն):— Թ. Պարամանյան, «Նյութեր հայկական ճարտարապետության պատմության», Երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 276—280:— Ն. Գ. Բանիասով, Յու. Ս. Յարալով, «Արխիտեկտուրա Արմենիա», Մոսկվա, 1950, էջ 101—104 (ռուսերեն):— Ա. Լ. Յակոբսոն, «Օլերկ խոսորի զողեստվա Արմենիա», V—XVII դ. դ., Մոսկվա—Լենինգրադ, 1950, էջ 132, 134 (ռուսերեն):— Վ. Մ. Հառոյրյան և Ս. Ա. Սաֆարյան, «Պամյանիկի արմանսկող զողեստվա», Մոսկվա, 1951, էջ 55—57, 60—61 (ռուսերեն):— Հ. Եղիազարյան, «Ալավերդու շրջանի կուտուրայի հուշարձանները» (ուղեցույց), VI, Երևան, 1952, էջ 67—68, 73—74:— Նույնի՝ «Նոր Գետիկավանք կամ Գոշավանք», «Էջմիածին», Էջմիածին, 1959, № է, էջ 50—51:— Հ. Զանիոնյան, «Միթիմար Գոյզը և Նոր Գետիկի վաներ», «Աշխատություններ Հայուստանի պետական պատմական թանգարանի», Երևան, 1948, № 1, էջ 123—124:— Կ. Ղաֆադարյան, «Սանահնի վաներ և նրա արձանագրությունները», Երևան, 1957, էջ 29—33 և այլն:
- <sup>7</sup> Օ. Խ. Խալիֆախյան, «Արխիտեկտուրնի պամյանիկի Ախատատ», «Արխիտեկտուրա ռեսուրսիկ Զահկավայա», Մոսկվա, 1951, էջ 340—342 (ռուսերեն):— Կ. Ղաֆադարյան, «Հաղըատի ճարտարապետական միքանի հուշարձանները», «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1963, № 1, էջ 132—134:

Վանքերում գպրցներն ու գրատները որպես կանոն գտնվում են պարսպից ներս զանգան հիմնական կառուցների միջև՝ եկեղեցիներից փոքր ինչ հեռու: Երբեմն նրանք լինում են վանքի սահմաններից դուրս, ինչպես, օրինակ, Գեղարդում: Բացառություն են կազմում Գլածորի համալսարանի շինությունները: Գլածորը որպես բարձրագույն գպրց հիմնադրված է 1280 թվականին վանքերից հեռու՝ Գալլիձոր կոչված փոքրիկ ավան:

Դպրոցներն ու գրատները կառուցվում էին հոգուրականության, թագավորների և իշխանների նախաձեռնությամբ: Գլածորը կառուցել է Ներսես Մշեցի վարդապետը, Հաղըատի գրատունը՝ վանահայր Հովհաննեսը, Նոր Գետիկինը՝ վանահայր Մարտիրոսը հուսակցությամբ, Գավիթը (Անհող) թագավորի դուստր Հրանուշը կառուցել է Սանահնի գրատունը, Վաշի իշխանը և իր կինը՝ Մամախաթունը կառուցեցին Հոռոմոսավանքի գրատունը, Քուր իշխանը և իր կինը՝ Խորիշահը Սաղմոսավանքի գրատունը, և այլն:

Հաճախ գեղարվեստական մեծ արժեք ներկայացնող ճարտարապետական այդ կառուցների հեղինակները, ստեղծողները գրեթե անհայտ են: Հոռոմոսավանքի գրատունը, ինչպես հիշված է վիճակի արձանագրության մեջ, կառուցել է Կարսնեցի վարպետ Ֆրերը 1277 թվականին: Կարելի է ենթադրել նաև, որ Կիրակոս Գանձակեցու մոտ հիշված Միթիմար հուսնը հենց հանդիսանում է Նոր Գետիկի գպրցի և գրատան հեղինակն ու կառուցողը:

Գրատների պատվիրատունները ու միայն շենքերի կառուցման բոլոր ծախքերն էին հոգում, այլև մեծ նվիրատվություններ էին կատարում: Նվիրատվություններ էին կատարում նաև ուրիշները: Վիմագիր արձանագրությունների մեջ հիշված նվիրատվությունների քանակն ու բնույթը պացած է այն բանի, որ ժողովուրդն ինքը հոգի էր տանում հայ մշակութի զարգացման համար: Վանքերի վիմագիր արձանագրություններում նվիրատվությունների թվում նշվում են ոչ միայն ձեռագրեր՝ երեմն թանկագին կաղմեն ունեցող, ոչ միայն դրամ և եկեղեցական թանեարժեք սպասք, այլև խաղողի ալգիներ: Արդիներից ստացող մշտական եկամուտները ծահսովում էին գրատների, հետեւաբար և դպրուների օտագործման, բարդագվաճման և պահպանման համար:

<sup>6</sup> «Երակ», Տեղագրութիւն պատկերացուց, Հաւաքեաց Հ. Անոնի վարդապետ Մ. Ալիշան, յուփառ Միթիմարայ, Վենետիկ, 1881, էջ 25.

## 1. ՊԳՐՈՑՆԵՐԸ

Դպրոցների կառուցումը սերտորեն կապված է հայ ժողովրդի մշակույթի ընդհանուր վարելքի հետ, և ասնավորապես օ դարի սկզբին Սեսրոպ Մաշտոցի կողմից հայոց նշանագրերի ստեղծման հետ: Օ դարում արդեմ Հայաստանում դպրոցները երկու կարգի էին: «Իպլոց» հանրակրթարան, ուր դասավանդվում էր մայոքնի լեզվով և վարդապետարան՝ բարձր տիպի կրթարան, որի սաները ավարտելուց հետո ստանում էին վարդապետի՝ գիտնականի կոչում, որը նրանց դասավանդման իրավունք էր տալիս: Հանրակրթական դպրոցներ կային գրեթե բոլոր վանքերին կից, իսկ վարդապետարաններ՝ համեմատար խոշոր վանքերում, որ զեկավարվում էին գիտնական վանահայրերի կողմից: Եւ է դարերում համբավավոր էին Այրարատի, Սյունիքի և Արշարունյաց վարդապետարանները: Ե դարի սկզբին գրականությունը գերազանցապես թարգմանական է, բայց շուտով հանդես են դալիս հայ նշանավոր հեղինակներ Խորենացին, Եղիշեն, Եղիշիկը, Փարպեցին, որոնց անմաս երկերը Ե դարի մեր մշակութիւնը:

Ին ինչպիսի լայն տարածում ուներ թարգմանական գրականությունը՝ վկայում է է դարի վանքերից մեկի անոնը՝ Թարգմանչաց, Էջմիածնի շրջանի Ալգեշտ գյուղում:

Դպրոցական շենքերի մեծ շինարարություն է ծավալմում հայկական անկախ թագավորությունների գոյության շրջանում: Թ—ԺԴԴ դարերում իրենց վարդապետարաններով Հայաստանը մեծ հոչակ ունեին և հայ մշակույթի խոշորագույն կենտրոններ էին հանդիսանում Անին, Տաթևը, Սանահինը, Հաղորդը, Նոր Գետիկը, Սաղմոսավանքը, Նորավանքը, Գլածորը, Նարեկը, Վարագը, Աղթամարը, Վանը, Լիմը, Կտուցը և այլն, իսկ Կիլիկյան Հայաստանում՝ Հռոմեան, Սիսը, Դրազարկը, Ակները, Բարձրերդը, Գները, Սև լեռը և այլն: Խոշոր քաղաքներում կային նաև աշխարհիկ դպրոցներ, որ հիմնված էին պետության կողմից, օրինակ, Կիլիկիայի վելուն թ թագավորի հիմնադրած դպրոցները: Բարձրագույն դպրոցներ ունեին նաև Փոքր Ասիայի, Սիրիայի, Միջագետի և Պաղեստինի հայ գաղթավայրերի վանքերու: Ավելի ուշ դպրոցներ բացվեցին Հնդկաստանում, Եգիպտոսում և արևմտյան Եվրոպայի երկրներում:

Դպրոցները վարդապետարան և դպրոց կոչելուց զատ ունեցել են նաև ուրիշ անոններ՝ նայած իրենց նշանակության: Վայոց Ջորում գտնվող Գլածորի դպրոցը ժամանակակիցների կողմից կոչվել է մեծ վարժարան, համալսարան և նույնիսկ «երկրորդ Աթենք»:


Համալսարան են կոչվել նաև Սանահինի դպրոցը Ժ-ԺԴ դարերում և Տաթևի դպրոցը ԺԴ դարի երկրորդ կեսի Հեղինակներ Սարգիս եպիսկոպոս Հալալյանը և ի. Հարությունյանը Սանահինի դպրոցը, ուր դասավանդել է Գրիգոր Մագիստրոս Պահապանին (990—1058 թ.), կը լու են ճեմարան:

Միջնադարյան դպրոցներում, նախնական կրթություն ստանալուց բացի, ուսումնասիրում էին նաև միջնադարյան յոթ ազատ արվեստները՝ քերականություն, ճարտասանություն, մաթեմատիկա, երկրաշափություն, աստղագիտություն և երաժշտություն, ինչպես նաև բժշկություն, նկարչություն, գիտավորապես մանրանկարչություն և այլն: Այդ դպրոցներում զրվում, թարգմանվում և ընդօրինակվում էին նաև զանազան կրոնական գիտական երկեր:

Այժմ դժվար է դպրոցների ճարտարապետության մասին այս կամ այն շափով դրական տեղեկություններ տալ, քանի որ գեռևս ստույգ հաստատված չէ այն փոքրաթիվ շենքերի դպրոց լինելը, որոնք որոշ հետազոտողների կողմից համարվում են դպրոց:

Մեզ հայտնի չէ նաև դասավանդման ընթացքը վաղ ժամանակներում, որի շնորհիվ հնարավոր լիներ գաղափար կազմել դպրոցական շենքի բնույթի մասին: Այսուհետեւ կարելի է ենթադրել, որ նախնական ուսուցումը կատարվում էր փոքրիկ շենքերում, որոնց քանակը կախված էր աշակերտների թվից և ուսման տևողությունից: Վարդապետարանների համար կառուցվել են առանձին շենքեր, որոնք հարմարեցված են եղել հատուկ առարկաների՝ երաժշտության, նկարչության և այլն ուսուցմանը: Դասախոսությունների համար (մանավանդ փիլիսոփայական և ճարտասանական առարկաների) հատկացվել են հատուկ դահլիճներ, որոնց մեծությունը դարձյալ կախված է եղել ունկնդիրների թվից: Աշխատանքը ձեռագործ վրա (թարգմանություն, արտագրություն) կատարվում էր նույն շենքերում կամ, որ ավելի հավանական է, դաստիարակների և աշակերտների բնակելի շենքերում, նկարազարդում՝ նկարչական արվեստանոցներում, կազմելն ու վերանորոգում՝ կազմատներում: Գլածորում սաների թիվը հասնում էր 60—80 հոգու, ուսման տևողությունը 6—12 տարի էր՝ նայած ավանդվող առարկաներին:

Արդի գրականության մեջ մեզ հասած դպրոցական շենքեր են համարվում Սանահին, Նոր Գետիկի, Հաղորդի, Գեղարդի, Հռոմեանավանքի դպրոցները, ինչպես և ավելի ուշ կառուցված Հառիճի, Հովհաննավանքի, էջմիածնի և այլ ուսումնարանները:



Նկար 1.— Սանահին: Գիտոր Մագիստրոսի ճմարանի  
ներքին տեսքը:

Խորանաշատի գավիթից, որտեղ իր պարագմունքներն էր անցկացնում Վանական վարդապետը, քիչ բան է պահպանվել՝ այն ժամատուն դարձնելու հետևանքով։ Խոկ Տաթևում, որը մեծ շափով վերակառուցվել է Ժէ—Ժէ դարերում, Շատիվանքում և ուրիշ վանքերում հայտնի էլ չէ, թե ո՞ր դահլիճներն են հատկացված եղել պարագմունքների համար։ Հավանական է, որ այդ պարզվի պահպանված մասերի մանրամասն ուսումնասիրությունից հետո։

Այս անորոշության հետևանքով, տարրեր հեղինակներ դպրոցական շենք են համարել վանքի ամենատարբեր շինությունները, որոնց նշանակությունը ստուգ նշված չի եղել արձանագրությունների մեջ։ Որոշ շինություններ կարելի է ավելի մեծ հավանականությամբ լսարաններ համարել, քանի որ նրանք անմիջական կապ չունեն եկեղեցու հետ և կից են դրտներին։

Գիտնականները Սանահնում Գրիգոր Մագիստրոս Պահապետունու ճմարանի ուսումնական շենքն են համարում Ս. Աստվածածին և Ամենափոկի եկեղեցիների միջև գտնվող սրանը (նկար 1): Կասկածից դուրս է, որ այդ շինության հատակագծային և ծավալային կոմպոզիցիան պայմանավորված է եկեղեցիների առկայությամբ։ Այն իրենից ներկայացնում է թաղակապ մի սրահ իրար մոտ տեղափոխված կամարներով, որոնք հենված են

քառանկյունի որմնասյուների վրա, որոնց միջև ընկած տարածությունը նույնպես ժամկանը է կամարներով, որոնք երկայնակի բարձր ցոկոլի հետ միասին խոր որմնախորշեր են կազմում։ Բայ ավանդության, ունկընդիրները պարագմունքների ժամանակ տեղափոխում էին այդ որմնախորշերում։

Սրահի կառուցողական առանձնահատկությունները վկայում են, որ այն կառուցված է երկու էտապով։ Սրահի շուրջը գտնվող շինությունների ժամանակը, որ նշված է արձանագրությունների մեջ, թույլ է տալիս սրահի կառուցումը վերագրել ժամանակի մեջ, որի վերաբերյալ անտաշ քարերից են եղել, իսկ ծածկը գալաքտիկ աղբատաշ է նաև մի երկրորդ գավիթ, որի պատերը անտաշ քարերից են եղել, իսկ ծածկը գալաքտիկ աղբատաշ է։ Սածկը այրվել է մոնղոլների կողմից, որոնք կողոպտել են վանքը ժամանակում է նաև մի երկրորդ գավիթից բացի հիշատակում է նաև մի երկրորդ գավիթից բացի համարությունից, գավիթը կառուցված է եղել ժամանակի սկզբին։

Նոր Գետիկի վանքում ուշադրության արժանի են այն շենքի մնացորդները, որ Կիրակոս Գանձակեցու մոտ անվանված է գավիթ։ Թվարկելով Սարտիրոս վարդապետի շինարարական աշխատանքները, պատմից եկեղեցուն կից սրբատաշ քարերից կառուցված գավիթից բացի հիշատակում է նաև մի երկրորդ գավիթ, որի պատերը անտաշ քարերից են եղել, իսկ ծածկը գալաքտիկ աղբատաշ է։ Սածկը այրվել է մոնղոլների կողմից, որոնք կողոպտել են վանքը ժամանակում է նաև մի երկրորդ գավիթից բացի համարությունից, գավիթը կառուցված է եղել ժամանակի սկզբին։

Հետազոտողներից ոմանք (Ա. Թումանյան) այդ շենքի մնացորդները սեղանատում են համարում, ուրիշները այն համարում են գրատանը կից ընթերցարան<sup>10</sup>։ Առաջին ենթադրությունը ուշնշով հիմնավորված չէ, իսկ երկրորդը քիչ հավանական է, շենքի մեծ շափերի պատճառով (տարածությունը 195 քառակում մետր)։

Կիրակոս Գանձակեցու տված տեղեկությունը նորանաշատի գավիթի ուսումնական նշանակության մասին, հիմք է տալիս այդպիսի նշանակություն վերագրել նաև նոր Գետիկի տվյալ գավիթին, որտեղ ըստ երևույթին ու միայն պարագմունքներ էին անց կացվում սաների հետ, այլ նաև գրվում և արտագրվում էին ձեռագրերը։ Այս շինության ուսումնական նշանակությունը ունենալու օգտին են արտահայտվել նաև Հ. Զանփոլադյանը, Ն. Տոկարսկին և Հ. Եղիազարյանը<sup>11</sup>։

9 Կիրակոս Գանձակեցի, էջ 209։

10 Ա. Թումանյան, «Հայկական ՍՍՌ Դիլիջանի շրջանի պատմական հուշարձաններ», Երևան, 1937, էջ 17։ — Հ. Զանփոլադյան, «Մ. Գոշը և նոր Գետիկի վանքը», «Աշխատանքուններ» Երևանի պետական պատմական թանգարանից, Երևան, 1948, հատոր 1, էջ 124—125։


11 Հ. Զանփոլադյան, նշված աշխատանքունը, էջ 125, 131։ — Ն. Տոկարսկի, «Հայաստանի ճարտարապետությունը Դ—Ժ դարերուն» (առևելքն)։ — Հ. Եղիազարյան, «Գոշավանք կամ նոր Գետիկի վանքը», «Եղմիածին», Էջմիածին, 1957, թ է, էջ 50։

Ուսումնասիրվող շենքը, որ կառուցված է գրատան հետ միաժամանակ նրա արևմտյան կողմում, իրենից ներկայացնում է ուղղանկյուն մի շինություն, որի պատերը շարված են գեղավուն լեռ կրաքարից, որոնք դարսված են ուղղահայաց դիրքով: Հաստ պատերի մեջ (1,5 մ.), որ պահպանվել են 3—4 մետր բարձրությամբ, կան ծածկի գերանների բները (նկար 2): Շենքի մեծ չափերը (11,68×16,70 մ.), որ բացառում է ծածկը ամրողական գերաններից պատրաստված լինելը, ինչպես և պատերի մեջ բացված նեղ, սահմանափակ թվով պատուհանները, հիմք են տալիս ենթադրելու, որ շենքն ունեցել է մողովդական բնակարաններում կիրառվող հազարաշեն ծեփ վրանանման ծածկ: Ենելով շենքի համաշափ լուսավորման անհրաժեշտությունից և նկատի ունենալով գերանների սովորական չափերը, պետք է ընդունել, որ ծածկն ունեցել է երեք հաջորդաբար տեղավորված վրան, կենտրոնում՝ ութկողմանի վրան բառակուսի հիմքի վրա ( $7,5 \times 7,5$  մ.) թերին՝ ուղղանկյուն վրան ( $4,6 \times 7,5$  մ.): Հայաստանի շինարարական պրակտիկայում երկու կամ երեք հաջորդաբար տեղադրված վրան ունեցող ծածկը կիրառվում էր ինչպես բաղաքական (Կանի Հայկավանք և նորաշեն եկեղեցիները) ճարտարապետության մեջ<sup>12</sup>, երկու վրանով ծածկ այս սրացի համար թիւ հավանական է, քանի այդ դեպքում վրանների հենասյունը կիսանգարեր մուտքը:

Խորանաշատի գավիթը, որ ծառայել է որպես պարապմունքների սրահ, կառուցված է գլխավոր եկեղեցու արևմտյան ճակատին կից, որտեղ այժմ տեղափորված է շորո սյուն ունեցող ժամատումը: Այդ պատճառով, առանց այժմյան կառուցումների մանրակրկիտ ուսումնասիրության, գեվար է որոշել նախկին շենքի ճարտարապետական կողաղիցիան: Գ. Գ. Սարգսյանի կարծիքով, որ մի առիթով հայտնել է ինձ, Խորանաշատի գավիթը իրենից ներկայացնում էր թաղակա մի սրահ, որը արևմտյան երկայնակի կողմում պատի փոխարեն կամարակապ բացվածքներ ուներ:

Հայրատի վանքում, Ռ. Երզնկանցի կարծիքով, որպես պարապմունքների սրահ ծառայել է ժթ դարում կառուցված սեղանատունը, որը հետագալում ժթ դարում վեր է ածվել ձիթհանքի: Որպես ապացույց իր ենթադրության, նա նշում է, որ շենքի գլխավոր

<sup>12</sup> Հ. Խալիքախչան, «Հայկական սեղանատուների ճարտարապետությունը», «Արխիտեկտուրունոյն նաստառապու», Մոսկվա, 1953, № 3, էջ 140, 141 (ռուսերեն):



Նկար 2.— Նոր Գետիկ: Ընդհանուր տեսքի մի մասը: Զան կողմում, ներքևում, դպրոցի մնացորդը, կենտրոնում շանգակալաւունը գրատան վրա, աջ կողմում սախարաբի մուտքը և գավիթի անկյունը:


մուտքը տեղավորված է վանքի պարսպից գուրս, որպեսզի հնարավորություն արվի վանքից գուրս ապրող աշակերտներին հաճախելու պարապմունքներին<sup>13</sup>:

Հ. Զանփողայանը և Հ. Եղիազարյանը ուսումնական շենք են համարում վանահայր Համազասպի 1257 թվականին կառուցած շենքը, որը և կոչվում է նրա անունով<sup>14</sup>: Այդ շենքի նշանակության մասին հիշատակությունների բացակայությունը և եկեղեցիներից հեռու գտնվելու հանգամանքը հիմք են տալիս այն դիտել որպես բաղաքացիական կառուցվածք, որը նախատեսված է եղել բաղմամարդ պարապմունքների և ժողովների համար<sup>15</sup>: Այս ենթադրության անուղղակի հիմք

<sup>13</sup> Ռ. Երզնկանց, «Հնախոսական տեղագրություն Հայրատա», էջ 170:

<sup>14</sup> Հ. Զանփողայան, նշված աշխատությունը, էջ 131: —Հ. Եղիազարյան, «Ազիզակովի շրջանի կուտարայի հուշարձանները», Երևան, 1955, էջ 73:

<sup>15</sup> Կ. Ղաֆարարյանի կարծիքով, Համազասպի շենքը իրենից ներկայացնում է սովորական եկեղեցական ժամատուն: Տե՛ս Կ. Ղաֆարարյան, «Հայրատ», Երևան, 1963, էջ 50—57:



Նկար 3.—Հաղբատ: Համազասպի շենքի ներքին տեսքը:

կարող է հանդիսանալ նաև այն, որ շենքը կառուցված է գրատանը կից, և նրա հետ կապ պահպանելու նպատակով, հարավային պատի մեջ մի փոքրիկ դուռ է ունեցել, որը հետագայում փակվել է:

Համազասպ վարդապետի շենքը իրենից ներկայացնում է սովորական քառակուսի գավթի չորս սյուներով, որոնք իրենց վրա կրում են ծածկը: Վերջինս, պահող կամարների միջոցով, բաժանված է տարածությամբ իրար հավասար ինք մասի (նկար 3): Կենտրոնական մասը ծածկված է քառակուսու վրա նստած ութկողմանի վրանով, որի վերևում երդիկն է: Անկյունային մասերը ծածկված են անկյունով իրար միացող թաղերով, իսկ մյուս մասերը՝ թաղերով:

Համազասպ վարդապետի շենքն իր տարածությամբ ամենամեծն է հանդիսանում Հայաստանում նման տիպի շենքերի թվում: Նրան աարբերող առանձնահատկությունը ոչ մեծ, հատակից մի քիչ բարձու արսիդ ունեցող խորանն է՝ ցածր բեմով: Այս շենքում են կարդացվել քարոզները, զասախոսությունները և ճառերը: Հսու երեսութին, կազմակերպվող միջոցառումների համար, խորանի առջև և չորս սյուների միջև, այցելուների խմբման տեղերում, հատակը սալապատված է:

Հետաքրքրություն են ներկայացնում դռան բացվածքից վեր, նրա երկու կողմերում և արևմտյան ճակատի եղբերին մոտ գտնվող քարե կոնսոլները, որոնք վկայում են փայտեածկի գոյությունը: Այն անհրաժեշտ էր ոչ միայն ներքնամասի դռանը մոտ տարածությունը մթնոլորտային տեղումներից պաշտպանելու համար, այլև վատ եղանակին գրատան հետ հանգիստ կապ պահելու նպատակով:

Գեղարդի վիմափոր շենքերից մեկի, որ արձանագրության մեջ հիշատակված է որտես գավթ և փորված է 1288 թվականին Պապի իշխանի և նրա կնոջ՝ Ռուզուդանի նախաձեռնությամբ, ներքնամասը ճարտարապետական ձեռվ նման է Համազասպ վարդապետի շենքին: Այս ներքնամասը ոչ միայն մեկուսացված է եկեղեցուց, այլև գտնվում է կառուցից երկրորդ հարկում, ուր կարելի է բարձրանալ դրսի կողմից աստիճաններով, որտեղից ժայռափոր միջանցքը տանում է դեպի գավթի:

Վ. Հարությունյանը, Ս. Սաֆարյանը, Ա. Սահինյանը և ուրիշները այն դամբարան են համարում, որը քիչ հավանական է, քանի որ դամբարան կա առաջին հարկում, իսկ Հանգիոլադյանը կարծում է, որ այն հատ-

կացված է եղել պարապմունքներ անցկացնելու համար<sup>16</sup>:

Գավիթն ամբողջությամբ ներքին սյուներով հանդերձ վիմափոր է: Լուսը գավիթի կենտրոնի երդիկից է (նկար 4):

Ըստ երևութիւն պետք է լսարան համարել նաև Հոռոմոսավանքի փոքր դահլիճը, որը հանդիսանում է տարրեր ժամանակներում կառուցված Ս. Հովհաննես եկեղեցու հարավային կողմում գտնվող դահլիճներից մեկը:

Հ. Ղևոնդ Ալիշանի նկարագրությամբ և Թ. Թորամանյանի շափագրական գծագրերի համաձայն, Հիմնական շենքերը տեղակարգված են հաջորդաբար, իրար նկատմամբ որոշ անկյան տակ և հաղորդակցվելիս են եղել դոների միջոցով<sup>17</sup>: Փոքրիկ դահլիճի մի կողմում նախամուտքն է և մի փոքր սենյակ, մյուս կողմում՝ միջին մեծության անկյունային մի սրահ, ըստ արձանագրության՝ գրատունը, որի հարակից կողմում գտնվում է մեծ դահլիճը, որն ըստ երևույթին նախատեսված է եղել սպասքը պահելու համար:

<sup>16</sup> Վ. Հարույրունյան, Ս. Սաֆարյան, նշված աշխատությունը, էջ 59, աղյուսակ 120—121:— Ա. Սահմենյան, «Գառնի և Գեղարդ», Մոսկվա, 1958, էջ 19 (ոռուսերեն):— Հ. Զանփոլաղյան, նշված աշխատությունը, էջ 131:

<sup>17</sup> Ալիշան, «Երակ», էջ 23—25: Թ. Թորամանյանի շափագրությունները ինձ ցույց է տվել իր գուտքը՝ Ն. Թորամանյանը:


Մուտքի դռան վերևում գտնվող արձանագրության համաձայն, փոքր դահլիճը, նախամուտքը և սրան կից սենյակը կառուցել են Վաշեն և Մամախաթունը 1229 թվականին, որոնք որոնք կոչված են նշխարատուն: Մեր կարծիքով այն նշխարատուն է կոչված այն պատճառով, որ այդ սենյակները կառուցելուց առաջ չկ եղել միջին, անկյունային դահլիճը, որը կառուցվել է ավելի ուշ՝ 1277 թվականին որպես գրատուն: Մինչ այդ, որպես գրատուն ծառայել է փոքր դահլիճին կից սենյակը: Իսկ փոքր դահլիճը հատկացված է եղել ձեռագրերի վրա աշխատելու և ոմանդիրների հետ պարապելու համար:

Փոքր դահլիճն ունի քառակուսի հատակագիծ, մոտ 60 քառակուսի մետր տարածությամբ, որ լուսավորվում է վլանաձև ծածկի երդիկի միջոցով: Որմանխորշեր չունի: Պատերի մակերեսը շրջանակված է երեք կամարով, որ և դիտելիս անվերջանալի կամարաշարքի տպավորություն է թունում (նկար 5): Պատերը զարդարող եռասյունները և նրանց վրա հենվող կամարները, որոնք վերևում կիսագլաններ ունեն, մեկնարանված են ոչ թե որպես զարդ, այլ որպես պատի վերին՝ դուրս ընկնող մասը կրող կառուցյ: Հոգոր քիվը ոչ միայն կրծատում է ծածկի թոփշը, այլև սահուն անցում է ստեղծում դեպի վրանաձև քառակուսի հիմք ունեցող թաղը, որի երեսը զարդարված է քարի վրա փորագրված շթաքարերով (ստալակտիտներով):

Ուսումնասնիրված օրինակները բավականաշափ նյութ չեն տալիս միջնադարյան Հայաստանի դպրոցական շենքի ամենատարածված ճարտարապետական ձեր որոշելու համար: Կարելի է միայն նշել այդ շենքերի համար բնորոշ առանձնահատկությունները:

Դպրոցները տեղավորվում էին այդ նպատակին հարմարեցված կամ հատկապես կառուցված շենքերում: Սևնյակները փորրաթիվ են եղել: Չի եղել կահավորում՝ սեղաններ, նստարաններ, որոնք ազգեին շենքի կոմպոզիցիայի վրա: Չեն եղել մեծ որմնախորշեր:

Շենքերի մեծությունը տարրեր է: Փոքրերց բացի, կառուցվում էին նաև բավական մեծերը: Սանահնում լսարանի մակերեսը 34 քառակուսի մետր է, Հոռոմոսավանքում՝ մոտ 60, Գեղարդում՝ 175, նոր Գետիկում՝ 195, իսկ Համադասպ վարդապետի շենքը Հաղորդում 256 քառակուսի մետր մակերես ունի: Դժվար է բարարել այսրան մեծ տարրերությունները: Հնարամնոր է, ոռ այդ կախված էր սովորողների թվից կամ կառուցողների դռամական հնարամությունների: Կարելի է ենթադրել, որ Սանահնում լսարանի փորրության պատճառով, անհրաժեշտության դեպքում, օգտագործվում էր նաև Ս. Աստ-




Ն կ ա ր 4.— Գեղարդ: Երկրորդ հարկի վիմափոր սրահի ներքին տեսքը:

վածածին եկեղեցու գավիթը, որի հետ Գրիգոր Մագիստրոսի ճեմարանի սրահը հաղորդակառությունը է կամարակապ լայն բացվածքով:

Ենքին ձևը նույնպես տարրեր է՝ բառակուսոց մինչև կողմերի 113 հարաբերություն ունեցող ուղղանկյուն բառանկյունի: Ենքն ունենում է մեկ մուտք արևմտյան կողմում կամ այդ կողմին մոտ: Այդ, հավանաբար, բացատրվում է նրանով, որ գարոցները ենթակա էին հոգեորականներին: Կարսվում էին պաշտամունքային շենքերի թվին:

Վածածինասիրված օրինակներից բացի, անշուշտ, կան նաև դպրոցական ուրիշ շենքեր, որ պահպանվել են մինչև մեր օրերը առավել կամ պակաս լավ վիճակում, որոնք սակայն անմատչելի են մեզ համար: Հիշենք Ներքին Վարագավանքի, որը 8 դասարան է ունեցել, Աղթամարի և այլ վանքերի դպրոցները:



Նկար 5.— Հոռոմոսավանք: Քառակուսի դամբիճի ներքին տեսքը:

Ենքերի լուսավորումը ևս միատեսակ չէ: Եթե Սանահնում լուսավորությունը կարելի է այս կամ այն շափով բավարար համարել, ապա Հաղբատում և մանավանդ Գեղարդում այն ակներեաբար անբավարար է: Երդիկից ընկնող լույսը լավ լուսավորում է շենքը միայն ամռան պարզ օրերին՝ ցերեկված ժամերին: Ուրիշ ժամանակ, հատկապես ձմռանը և ամպամած օրերին, դահլիճի մեծ մասում կիսախավար է տիրում:

Դահլիճների արտաքին ձևերը բավական պարզ են ու որոշ: Պատերը հարթ են, շարված անտաշ կամ սրբատաշ քարերով և մեծ մասմար վերջանում են հասարակ քիվով:

Զարդարանդակները շատ համեստ են: Նույնիսկ գավթանման սրահներում շինարար հրաժարվել է կոմպոզիցիոն բարդությունից, որ բնորոշ է նրանց համար: Սյուները և նրանց համապատասխանող որմնասյուները պատրաստված են նույն ձևով (տե՛ս նկար 3): Հասարակ են նաև պարագծային մասի ծածկերը, որոնք զուրկ են որևէ զարդից: Միայն համեմատաբար լավ լուսավոր-

վելի ուշ ժամանակի՝ ԺԷ—ԺԹ դարերին վերաբերող դպրոցական շենքեր պահպանվել են Հայաստանի երրեմնի մշակութային խոշոր կենտրոններում՝ Հառիճի վանքում, Հովհաննավանքում, Էջմիածնի վանքում և այլուր: Հնարավոր է, որ նրանք կառուցված են ավելի հին դպրոցների տեղում: Դրանք, որպես կանոն, ձևով հասարակ շինություններ են, երրեմն բավական մեծ թվով սենյակներ ունեցող, ինչպես, օրինակ, Հառիճում: Բարձրությունը մեծ չէ, սենյակները լավ լուսավորվում են մեծ պատուհաններով, տափակ ծածկը պահպանվում է գերանների վրա:

Առանձնապես աշքի է ընկնում էջմիածնի հոգեոր դպրոցի շենքը, որ կառուցված է 1813 թվականին եփրեմ կաթողիկոսի օրոք, վանքի պարսպից դռւս, արևելյան կողմում: Այդ մի հոյակապ երկնարկանի շենք է, ուր դասարանները տեղափոխված են լայն միջանցքի երկու կողմերում: Ենքի կենտրոնում, երկրորդ հարկում, գտնվում է դահլիճը, որ ծածկված է բարձր, վիթխարի գմբեթով:

(Տարածակելի)